

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

1999թ. հոկտեմբերի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ազգային-եկեղեցական արքագումար ժողովը պատգամավորների վստահության քվեով Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանին ընտրեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Այդ պաշտոնը, ինչպես հայտնի է, լինելով հայրապետական գաղափարի մարմնացում՝ նվիրումն է Եկեղեցուն եւ Ազգին, Աստծուն ու Հայրենիքին: Ազգընտիր Հայրապետն ստանձնեց իր Խաչի պատասխանատվության խոր գիտակցությամբ, հավատալով ու հուսալով Քրիստոսի զորակցությունը եւ զորեղացված այն համոզմամբ, որ առաքելական Հայ Եկեղեցին «այլեւս միայնակ չէ իր ժողովրդի առաջնորդության պատասխանատվության մեջ, ինչպես եղել է դարեր շարունակ»: Եւ իր երջանկահիշատակ նախորդների ավանդությամբ Վեհափառը հռչակեց իր տեսլականը, հրապարակելով առաջին Կոնդակը, իր Թուղթ ընդհանրականը՝ կանխագծեց հայրենի Եկեղեցու հետագա ճանապարհի հորիզոնները: Խորհրդային մահաքնից ձերբազատված Հայոց հալածյալ Եկեղեցին, որ զարթոնք էր ապրում, աստիճանաբար վերագտնում էր կորուսածը՝ ի վերջո ապրելու համար լիարժեք հոգեւոր կյանքով, թեւակոխեց իր պատմության նոր մի շրջափուլ:

Այսօր, երբ համայն աշխարհի հայությունը տոնում է Ամենայն Հայոց աստվածընտիր Հայրապետի ծննդյան 60-ամյակը եւ գահակալության 12-րդ տարեդարձը, հետադարձ հայացքով տեսանելի են անդուլ աշխատանքի արգասաբեր տարիների նվաճումները: Ավելի քան տասնամյա այդ ուղին հատկանշվում է հետեւողականորեն, քայլ առ քայլ կատարված իրագործումներով, կյանք են առել

*սրբազան Կոնդակի ծրագրային հանգրվաններից շատերը՝ կյանքի բոլոր բնագավառներից ներս:*

*Կանոնակարգվել են Եկեղեցի-պետություն հարաբերությունները, եւ 2005 թվականին Սահմանադրությամբ ամրագրվել է Հայաստանյայց Ս. Եկեղեցու բացառիկ առաքելությունը ժողովրդի հոգեւոր կյանքում: Եկեղեցին պատշաճ դերակատարություն է ստանձնել ազգային ինքնության, մշակույթի, կրթության ասպարեզներում: Հանրակրթական դպրոց է ներմուծվել «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան, Գեւորգյան հոգեւոր Ճեմարանը ստացել է աստվածաբանական համալսարանի կարգավիճակ, հաջողությամբ գործում են Սեւանի Վազգենյան դպրանոցը, մյուս կրթական հաստատությունները: Զինված ուժերում Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր սպասավորության կանոնադրությամբ կարգավորված է բանակի հոգեւոր ծառայությունը: Մայր Աթոռի «Ս. Ներսես Մեծ» հիմնադրամը, հայորդյաց տները եւ այլ կրթական ու մարդասիրական հաստատություններ ընկերային լայն ծրագրեր են իրագործում:*

*Կարեւորագույն տեղաշարժեր են կատարվել Մայր Աթոռի միաբանական կյանքում. այն համալրվել է շուրջ 300 հոգեւորականներով, վերադարձվել եւ բարեկարգվել են կալվածներ, որ օտարված էին: Վերահառնող խոնարհված եկեղեցիների կողքին կառուցվել են բազում նորերը: Ծայր գյուղական համայնքներ առաջին անգամ ստացան սեփական աղոթատներ, որ շինությունից ավելի ոգեղեն երեւույթ են: Զարգացնելով ընդհատված ավանդույթները՝ նորակառույց եկեղեցիները նոր փայլ են տալիս հայ ճարտարապետությանը, շինարարական մշակույթային, եւ բնական է, առաջին հերթին՝ պաշտամունքային ճարտարապետությանը:*

*Առավել ներդաշնակ, նպատակային ու արդյունավետ դարձնելու համար քույր եկեղեցիների հետ համագործակցությունը՝ Վեհափառի նախաձեռնությամբ կազմակերպվել է Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը: 2006-ի մարտի 1-ից Մայր Աթոռի Քարոզչական կենտրոնից առանձնացվել է Հրատարակչությունը, հանգամանք, որ նպաստել է գրատպության գործը մասնագիտորեն կազմակերպելուն: Հիմնավոր աշխատանքային պայմաններ են ստեղծվել «Շողակաթ» հեռուստաընկերության համար:*

*Այս եւ բազում այլ իրագործումներ նպաստում են Եկեղեցու առավել պայծառացմանը եւ, որ կարեւորագույն հանգամանք է այսօր՝ հայապահպանությանը, խնդիր որ Վեհափառ Հայրապետի անդրանիկ Կոնդակի առանցքն էր:*

*Անցյալ տասներկու տարիներին կատարված է վիթխարի ազգօգուտ ու եկեղեցանպաստ աշխատանք, սակայն անելիքները նույնպես քիչ չեն: Քսաներորդ դարի պատճառած վերքերն ամոքելու, «Եկեղեցին հայու հոգում կերտելու,*

*հաստատելու, զորացնելու եւ պայծառացնելու» համար ցանկալին աշխատել է պետք, ինչպես նշել է Հայրապետը իր ուխտի մեջ, աղոթելով առ Աստված՝ «Զորացրու եւ արժանի արա Հույսի, Սիրո, Հարության ճանապարհի անձանձիր ճամփորդը լինելու Եկեղեցու սպասավորության եւ «փոքր ածու»-իդ առաջնորդության մեջ, եւ թող միշտ ինձ հետ լինի խաղաղության եւ ճշմարտության Հոգիդ»։*

*Եւ այսօր, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառի հոտը՝ Հայաստանեայց Ս. Եկեղեցին, որ հայ ժողովուրդն ինքն է, ջերմորեն շնորհավորելով փառավոր հոբելյանը՝ խանդակաթ սրտով վերառաքում է իր աղոթքն առ Աստված.*

*Ամեն հայի սրտից բխած*
*Լսիր այս ձայն, ո՜վ Աստված,*
*Երկար կյանք տուր Հայրապետին,*
*Երկար օրեր Հայոց Հոր.*
*Տէ՛ր, անսասան պահիր դու միշտ*
*Քո իսկ հիմնած Մայր Աթոռ......*